ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

«25» հունիսի 2018 թվականի N 73-Ա

«ՍԵԴՆՈՒՇ» ՍՊԸ-Ի ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՎԱՍՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պետական միասնական գրանցամատյանի էլեկտրոնային քաղվածքը, «ՍԵԴՆՈՒՇ» ՍՊԸ-ի փոփոխված կանոնադրությունը, ընկերության 2018 թվականի հունիսի 18-ի թիվ №1 գրությունը և հաշվի առնելով Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը՝

Հրամայում եմ

1. Ընդունել ի գիտություն, որ «ՍԵԴՆՈՒՇ» ՍՊ ընկերությունը անվանափոխվել է «ԼԱՐԳՈ-ՎԻՆ» ՍՊ ընկերության:

2. Ընդերքի գործակալության պետին՝

1) ապահովել «ՍԵԴՆՈՒՇ» ՍՊ ընկերության ընդերքօգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթերում համապատասխան փոփոխությունների կատարումը.

2) ապահովել համապատասխան գրառումների կատարումն օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

3.«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից հետո եռօրյա ժամկետում:

4.Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

5.Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Վարդան Գևորգյանին:

ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ